ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/13

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան Մելիք Ադամյան 1, ստորև ներկայացնում է ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/13 ծածկագրով հայտարարված բանակցային ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ պարզաբանումները:

Հարցադրում N 1: 1). Մելիք Ադամյան 1 (Նիստերի մեծ դահլիճ)
Կետ 1 – 3 x 3 ձևաչափով (անկյունագիծը 165") տեսապատ (հրավերի օրիգինալ արտահայտությունն՝ *էկրան)*
Ինչպիսին է դահլիճում *արտաքին պարազիտային լուսավորությունը* չափված *լյուքսերով:* Այս ցուցանիշից է *կախված, թե արդյոք բավական* է ունենալ 500 կդ/մ^2*պայծառությամբ* տեսապատ, թե անհրաժեշտ է ձեռք բերել զգալի ավելի պայծառ մոնիտորներից բաղկացած տեսապատ:

Այդ ցուցանիշն ուղղակիորեն ազդում է պահանջվող 3 x 3 ձևաչափի տեսապատի արժեքի վրա:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Դահլիճներում առկա են պատուհանների մուգ վարագույրներ ,500 կդ/մ^{2}պայծառությամբ տեսապատը բավարար է:

Հարցադրում N 2 Արդյոք փորձել է Պատվիրատուն դահլիճում տեղադրել 500 կդ/մ^{2}պայծառությամբ մեծաչափ դիսպլեյ և տեղեկատվություն արտացոլել այդ սարքի միջոցով, որպեսզի համոզված լինի, որ նշված պայծառությամբ դիսպլեյները բավարար կաշխատեն տվյալ դահլիճում:

Եթե *ոչ,* ապա «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն պատրաստականություն է հայտնում Պատվիրատուին տրամադրել նման 500 կդ/մ^2 պրոֆեսիոնալ դիսպլեյ *նրա պայծառության համապատասխանությունը դահլիճի պայմաններին ստուգելու համար:*

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Ոչ չի փորձվել:

Հարցադրում N 3 Ինչպիսին պետք է լինի տեսապատի միջպանելային ճեղքը (Bezel Width) միլիմետրերով: Այդ ցուցանիշը նույնպես ուղղակիորեն ազդում է պահանջվող 3 x 3 ձևաչափի տեսապատի արժեքի վրա:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Միջպանելային ճեղքը (Bezel Width)նախատեսվում է 3.9 միլիմետր:

Հարցադրում N 4 Բացի տեսակոնֆերանս համակարգից, ինչ այլ ազդանշաններիաղբյուրներ *պետք է արտացոլվեն* կամ
նախատեսվում է հետագայում արտացոլել տեսապատի վրա: Նրանց քանակն ու տիպը (ձևաչափը):

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: *Պետք է արտացոլվի միայն տեսակոնֆերանսի ազդանշան:*

Հարցադրում N 5 Ինչ առավելագույն կետայնության ազդանշաններ պետք է արտացոլվեն կամ նախատեսվում է հետագայումարտացոլելտեսապատի վրա:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Նախատեսվում է արտացոլել 1920x1080 կետայնության ազդանշան:

Հարցադրում N 6 Քանի առանձին պատուհանպիտի արտացոլի տեսապատի վրա: Նրանց պահանջվող դասավորությունը տեսապատի վրա և կարգը:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Պատուհանների արտացոլման թիվը փոփոխական է , կախված տեսակոնֆերանսից:

Հարցադրում N 7 Ինչ հեռավորության վրա են գտնվելու այդ ազդանշանների աղբյուրները. Արդյոք

դահլիճում առկա են համապատասխան լարանցումներն և հնարավոր է արդյոք անհրաժեշտության դեպքում, դահլիճում նոր լարանցումների անցկացման իրականացումը:
Որպես տեղեկատվության արտացոլման տեխնոլոգիաների և սարքավորումների ոլորտում միակ մասնագիտացված կազմակերպությունն Անդրկովկասում (Հայաստան և Վրաստան) «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն իր պարտքն է համարում պաշտոնապես տեղեկացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը, որ ընդհանուր 5,760 x 3,240pixels (3 x 1,920 / 3 x 1,080 pixels)կետայնություն ունեցող տեսապատի վրա հնարավոր չէ արտացոլել պահանջվող Full HD(1,920 x 1,080 pixels) կետայնությամբ ազդանշան առանց վերջինիս որակի ակնհայտ վատթարացման՝ պատկերը ուղղակիորեն լոճվելու և լղոզվելու է:

Նշված խնդիրը լուծելու համար օգտագործվում են բավական թանկարժեք (8 -10 հազար ԱՄՆ դոլարից մինչև 50 -60 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ, կախված սարքի հնարավորություններից տրանսպորտային ծախսերն ու տեղական հարկերը չներառված) հատուկ մասնագիտացված համակարգող AV-սարքավորումներ (կոնտրոլերներ): Ակնհայտ է, որ նման սարքը բացակայում է պահանջվող սարքավորումների ցանկում:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Լարանցումներ առկա չեն, նոր լարանցման իրականացումը հնարավոր է:

Հարցադրում N 8 Կետ 2 - Սինխրոն թարգմանության համակարգ
Առավելագույնը քանի լեզվից թարգմանելու հնարավորություն պիտի ունենա պահանջվող համակարգը:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: 1 լեզվից:

Հարցադրում N 9 Այստեղ էլ շատ կարևոր է ճշտել արտաքին պարազիտային լուսավորությունը (Lux),քանի որ այդ ցուցանիշից է կախված անհրաժեշտ IR-ճառագայթիչներիքանակը:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Դահլիճներում առկա են պատուհանների մուգ վարագույրներ:

Հարցադրում N 10 Դահլիճի ո ր մասում է նախատեսված տեղադրել թարգմանիչների խցիկները:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Նախատեսվում է տեղադրել տեսապատի հետեվի մասում, մուտքից դեպի աջ:

Հարցադրում N 11 Առկա է արդյոք դահլիճում արտաքին ձայնարձագման համակարգ և նախատեսվո ւմ է արդյոք սինխրոն թարգմանության համակարգի համակցումը նշված համակարգի հետ:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Արտաքին ձայնագրման համակարգ առկա չէ և համակցում չի նախատեսվում:

Հարցադրում N 12 Կետ 3 - Լայնաչափ 2 x 80" դիսփլեյներ շարժական տակդիրների վրա(հրավերի օրիգինալ արտահայտությունը *շարժական էկրաններ)* Նույն արտաքին «պարազիտային լուսավորության» (Lux) հարցը:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Դահլիճներում առկա են պատուհանների մուգ վարագույրներ:

Հարցադրում N 13 Արդյոք Պատվիրատուն հաշվի է առել այն փաստ, որ պահանջվող ընդամենը 350 *կդ/մ² պայծառությունը համապատասխանում է սովորական անձնական համակարգչային մոնիտորներին* ներկայացվող պահանջներին և ակնհայտորեն չի համապատասխանում պրոֆեսիոնալ լայնաչափ դիսփլեյներին ներկայացվող պահանջներին:

Տեսապատից 30%-ով պակաս*պայծառություն ունեցող* այս դիսփլեյների վրա արտացոլվող տեղեկատվությունը **պարզապես կարող է չերևալ***բարձր արտաքին լուսավորության* պայմաններում.

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: **Այո պայծառությունը հաշվի առնված է:**

Հարցադրում N 14 Արդյոք փորձել է Պատվիրատուն դահլիճում տեղադրել 350 կդ/մ² պայծառությամբ *թեկուզ սովորական համակարգչային դիսփլեյ,* որպեսզի համոզված լինի, որ նշված պայծառությամբ դիսփլեյները բավարար կաշխատեն տվյալ դահլիճում:

Անբավարար պայծառությամբ դիսփլեյի օգտագործումը կարող է հանգեցնել նրան, որ այդ դիսփլեյների վրա արտացոլվող տեղեկատվությունը բարձր արտաքին լուսավորության պայմաններում պարզապես, չի երևա:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Ոչ, փորձված չէ:

Հարցադրում N 15 Արդյոք նշված դիսփլեյների համար պահանջվող անիվներով տակդիրները բարձրության էլեկտրական կարգավորում պիտի ունենան:
Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:
Պարզաբանում: Ոչ, չպետք է ունենա:

Հարցադրում N 16 Մելիք Ադամյան 1 (Նիստերի փոքր դահլիճ)
Ինչպիսին է արտաքին պարազիտային լուսավորությունը(Lux) դահլիճում:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:
Պարզաբանում: Դահլիճներում առկա են պատուհանների մուգ վարագույրներ:

Հարցադրում N 17 Պատվիրատուն հաշվի առել է այն փաստն, որ պահանջվող 80" մոնիտորի 350 կդ/մ² պայծառությունը համապատասխանում է սովորական անձնական համակարգչային մոնիտորներին ներկայացվող *պահանջներին և ակնհայտորեն չի համապատասխանում պրոֆեսիոնալ լայնաչափ* դիսփլեյներին ներկայացվող պահանջներին: Անբավարար պայծառությամբ դիսփլեյի օգտագործումը կարող է հանգեցնել նրան, որ արտացոլվող տեղեկատվությունն էկրանի վրա պարզապես, չի երևա:
Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:
Պարզաբանում: **Պայծառությունը հաշվի առնված է:**

Հարցադրում N 18 Արդյոք փորձել է Պատվիրատուն դահլիճում տեղադրել **350 կդ/մ²** պայծառությամբ թեկուզ սովորական համակարգչային դիսփլեյ, որպեսզի համոզված լինի, որ նշված պայծառությամբ դիսփլեյները բավարար կաշխատեն տվյալ դահլիճում:
Անբավարար պայծառությամբ դիսփլեյի օգտագործումը կարող է հանգեցնել նրան, որ այդ դիսփլեյների վրա *արտացոլվող տեղեկատվությունը բարձր արտաքին լուսավորության պայմաններում* պարզապես, չի երևա:
Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:
Պարզաբանում: Ոչ, փորձված չէ:

Հարցադրում N 19 Ինչպես է նախատեսվում տեղադրել պահանջվող 80" դիսփլեյն անշա րժ (պատի վրա), թե տակդիրի վրա:
Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:
Պարզաբանում: Նախատեսվում է տեղադրել տակդիրի վրա՝ շարժական:

***Հարցադրում* N 20** *Արդյոք պահանջվող անլար խոսափողային համակարգը պիտի ունենա* քվեարկության հնարավորություն և ինչպիսին այն պիտի լինի՝փակ (գաղտնի) կամ բաց, թե պիտի ապահովի քվեարկության երկու նշված տարբերակն էլ:
Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:
Պարզաբանում: Քվեարկության համակարգ անհրաժեշտ չէ:

Հարցադրում N 21 Արդյոք քվեարկության արդյունքները պետք է արտահանվեն*մեծ էկրանի վրա* և պահպանվեն համակարգչի հիշողությունում:
Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:
Պարզաբանում: Քվեարկության համակարգ անհրաժեշտ չէ:

Հարցադրում N 22 Դահլիճում առկա է **արտաքին ձայնարձագման համակարգ** և նախատեսվում է արդյոք անլար խոսափողային համակարգի **համակցումը** նշված համակարգի հետ:
Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:
Պարզաբանում: **Արտաքին ձայնագրման համակարգ առկա չէ և համակցում չի նախատեսվում:**

Հարցադրում N 23 Խորենացի 3 (Նիստերի դահլիճ)
Ինչպիսին է արտաքին պարազիտային լուսավորությունը(Lux) դահլիճում:
Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:
Պարզաբանում: Դահլիճներում առկա են պատուհանների մուգ վարագույրներ:

Հարցադրում N 24 Պատվիրատուն հաշվի առել է այն փաստն, որ պահանջվող դիսփլեյների ընդամենը 300 կդ/մ² և 350 կդ/մ² պայծառությունը համապատասխանում է սովորական անձնական

համակարգչային մոնիտորներին ներկայացվող պահանջներին և ակնհայտորեն չի համապատասխանում պրոֆեսիոնալ լայնաչափդիսփլեյներին ներկայացվող պահանջներին:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Պայծառությունը հաշվի առնված է:

Հարցադրում N 25 Արդյոք փորձել է Պատվիրատուն դահլիճում տեղադրել 350 կդ/մ^2 պայծառությամբ թեկուզ սովորական համակարգչային դիսփլեյ, որպեսզի համոզված լինի, որ նշված պայծառությամբ դիսփլեյները բավարար կաշխատեն տվյալ դահլիճում:

Անբավարար պայծառությամբ դիսփլեյի օգտագործումը կարող է հանգեցնել նրան, որ այդ դիսփլեյների վրա արտացոլվող տեղեկատվությունը բարձր արտաքին լուսավորության պայմաններում՝ **պարզապես, չի երևա:**

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: **Ոչ, փորձված չէ:**

Հարցադրում N 26 Արդյոք նշված 80" դիսփլեյի համար պահանջվող անիվներով տակդիրները պիտի ունենան բարձրության էլեկտրական կարգավորում:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Ոչ, չպետք է ունենա:

Հարցադրում N 27 Արդյոք պահանջվող անլար խոսափողային համակարգը պիտի ունենա քվեարկության հնարավորություն և ինչպիսին այն պիտի լինի՝փակ (գաղտնի) կամ բաց, թե պիտի ապահովի քվեարկության երկու նշված տարբերակն էլ:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Քվեարկության համակարգ անհրաժեշտ չէ:

Հարցադրում N 28 Արդյոք քվեարկության արդյունքները պիտի արտահանվեն*մեծ էկրանի վրա* և պահպանվեն համակարգչի հիշողությունում:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Քվեարկության համակարգ անհրաժեշտ չէ:

Հարցադրում N 29 Առկա է արդյոք դահլիճում արտաքին ձայնարձագման համակարգ *և նախատեսվում է արդյոք անլար խոսափողային համակարգի համակցումը նշված համակարգի հետ:*

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Արտաքին ձայնագրման համակարգ առկա չէ, և համակցում չի նախատեսվում:

Հարցադրում N 30 Տիգրան Մեծ 4 (Նիստերի դահլիճ)

Ինչպիսին է արտաքին պարագիտային լուսավորությունը(Lux) դահլիճում, որտեղ նախատեսված է տեղադրել նշված դիսփլեյը:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Դահլիճներում առկա են պատուհանների մուգ վարագույրներ:

Հարցադրում N 31 Պատվիրատուն հաշվի առել է այն փաստն, որ պահանջվող դիսփլեյների նշված ընդամենը 350 կդ/մ^2 պայծառությունը համապատասխանում է սովորական անձնական համակարգչային մոնիտորներին ներկայացվող պահանջներին և ակնհայտորեն չի համապատասխանում պրոֆեսիոնալ լայնաչափ դիսփլեյներին ներկայացվող պահանջներին:

Այս դիսփլեյի վրա արտացոլվող տեղեկատվությունը պարզապես կարող է չերևալ բարձր արտաքին լուսավորության պայմաններում:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Պայծառությունը հաշվի առնված է:

Հարցադրում N 32 Արդյոք փորձել է Պատվիրատուն դահլիճում տեղադրել **350 կդ/մ^2** պայծառությամբ *թեկուզ սովորական համակարգչային դիսփլեյ,* որպեսզի համոզված լինի, որ նշված պայծառությամբ դիսփլեյները բավարար կաշխատեն տվյալ դահլիճում:

Անբավարար պայծառությամբ դիսփլեյի օգտագործումը կարող է հանգեցնել նրան, որ այդ դիսփլեյների

վրա արտացոլվող տեղեկատվությունը բարձր արտաքին լուսավորության պայմաններում՝ **պարզապես, չի երևա:**

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Ոչ, փորձված չէ:

Հարցադրում N 33 Արդյոք նշված 80" դիսպլեյի համար պահանջվող անիվներով տակդիրները պիտի ունենան բարձրության էլեկտրական կարգավորում:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Ոչ, չպետք է ունենա:

Հարցադրում N 34 Արդյոք պահանջվող լարային խոսափողային համակարգը պիտի ունենա *քվեարկության հնարավորություն* և ինչպիսին այն պիտի լինի՝փակ (գաղտնի) կամ բաց, թե պիտի ապահովի քվեարկության երկու նշված տարբերակն էլ:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: *Քվեարկության համակարգ անհրաժեշտ* չէ:

Հարցադրում N 35 Արդյոք քվեարկության արդյունքները պիտի արտահանվեն*մեծ էկրանի վրա* և պահպանվեն համակարգչի հիշողությունում:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Քվեարկության համակարգ անհրաժեշտ չէ:

Հարցադրում N 36 Առկա է արդյոք դահլիճում արտաքին ձայնարձագման համակարգ և *նախատեսվում է արդյոք լարային խոսափողային համակարգի համակցումը նշված համակարգի հետ:*

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Արտաքին ձայնագրման համակարգ առկա չէ և համակցում չի նախատեսվում:

Հարցադրում N 37 <u>Հասցե՝ Մելիք Ադամյան 1</u>

1.Ինտերակտիվ լայնաչափ դիսպլեյներ շարժական տակդիրների վրա (հրավերի օրիգինալ արտահայտությունը շարժական էկրան-գրատախտակ):

a) Խնդրում ենք նշել պահանջվող դիսպլեյների մինիմալ պահանջվող միաժամանակյա հպումների քանակը (10, 20 *կամ այլն*): Տվյալ ցուցանիշը *ինտերակտիվ դիսպլեյների հիմնական բնութագրերից մեկն է և ուղղակիորեն ազդում է սարքավորման գնի վրա:*

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Միաժամանակյա հպումների քանակը նախատեսված է 10:

Հարցադրում N 38 b) Արդյոք նշված 82" դիսպլեյների համար պահանջվող անիվներով տակդիրները պիտի ունենան բարձրության էլեկտրական կարգավորում:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Այո, նախատեսված է բարձրության էլեկտրական կարգավորում:

Հարցադրում N 39 Վիդեոկոնֆերանս համակարգ:

1. Խնդրում ենք պարզաբանել, թե ինչով է բնորոշված որոշումը ձեռք բերել վիդեոկոնֆերանսի հենց ծրագրային լուծում:

Տեխնիկական առումովակնհայտ է, որ ցանկացած ասպարեզում լինի դա վիդեոկոնֆերանս համակարգ,թե ազդանշանների մշակման և արտացոլման այլ համակարգ,ապարատային լուծումնանչափ ավելի գերադասելի է, քանի որ իսպառ բացառում է ծրագրային ապահովման հետ կապված անկայունության և այլ բոլորիս քաջ հայտնի, հաճախ երևան եկող խնդիրները:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: **Որոշումը պայմանավորված է հետագա ընդլայնման հնարավորությամբ:**

Հարցադրում N 40 Մինչև 10 բաժանորդ ներառյալ պահանջվող Full HDվիդեոկոնֆերանս համակարգի կազմակերպման համար, թե տնտեսական և թե տեխնիկական*տեսակետներից* ելնելով, միակ ակնհայտ լուծումն էհանդիսանում օգտագործել ապարատային լուծում:

Այստեղ պատվիրատուի ուշադրությանը կցանկանայինք առաջարկել Polycom *ապարատային վիդեոկոնֆերանս*

համակարգերը, որոնք հաջողությամբ օգտագործվում են ՀՀ-ում 2008 թվ. և որոնցով գինված են ՀՀ Կառավարությունը, ՀՀ Կենտրոնական բանկը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, խոշորագույն *կորպորատիվ կառույցներ և մեծ քանակությամբ այլ պատվիրատուներ (որոշ լուծումների գինավոր հասանելի են*http://www.alpha.am/site/index.php?go=user page&do=6i *հասցեով)*, ինչպես նաև AVer *ապարատային վիդեոկոնֆերանս* լուծումները:

Ընդ որում, AVer Full HDվիդեոկոնֆերանս համակարգերն, որոնք հանրապետություն են մատակարարվում վերջին *3 տարիների* ընթացքում, *մի քանի անգամ ավելի էժան են,* քան համապատասխան Polycom լուծումները, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության Մաքսային Ծառայությունը արդեն իսկ մեկ տարուց ավելի հաջողությամբ օգտագործում է AVer EVC130p Full HDվիդեոկոնֆերանս համակարգը (1 կետ) *իր առօրյա աշխատանքում:*

10 (տաս) միաժամանակյա բաժանորդ (կետ) ապահովող AVer ապարատային լուծման *մանրածախ գինը*կազմում է ընդամենը 26 հազար ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ *(ներառյալ բոլոր հարկերը),* իսկ հրավերով պահանջված 7 (յոթ) միաժամանակյա բաժանորդի պարագայում միայն սերվերային ծրագրային վիդեոկոնֆերանս համակարգի *մանրածախ գինը* կազմում է *ոչ պակաս, քան 75* հազար ԱՄՆ դոլար *(տեղական 32% հարկերը ներառված չեն)*առանձ անհրաժեշտ լրացուցիչ լիցենզիաների և այլ բաղադրիչների և *չհաշված*2 հատ հրավերով պահանջված Intel Xeon պրոցեսորները, 1 TB Raid 5 HDD, dual LAN, 64GB RAM սերվերների գինը՝

Ընդ որում, **AVer**վիդեոկոնֆերանս համակարգերի ***տեսախցիկները*** ունեն **զգալիորեն բարձր**

N	**Բնութագիր**	**Հրավերի պահանջը**	**Aver EVC սերիայի տեսախցիկ**
1	տեսախցիկի տիպը	1/3" CMOS	1/3" CMOS
2	Կետայնությունը	1920 X 1080	1920 X 1080
3	Ոսպնյակի ֆոկուսային հեռավորություն	f=3.7-44 մմ	f=4.7—86 մմ
4	Խոշորացում	12 X (օպտիկական)	16 X (օպտիկական)
5	Թեքման անկյունը	+ 20/-30'	+ 25/-25'
6	հորիզոնական տեսադաշտը	72'	+100/-100'
7	Ուղղահայաց տեսադաշտը	41'	67'

տեխնիկական բնութագրեր*, ինչ թե պահանջված էհրավերով:*

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:
Պարզաբանում: Հետագայում բաժանորդների թիվը անհամեմատ մեծանալու է:

Հարցադրում N 41 Մրցույթի մասնակիցը պարտավոր է ապահովել բոլոր նշված վիդեոկոնֆերանսի կետերը սերվերներին միացնող անհրաժեշտ LAN ցանցով:
Խնդրում ենք պարզաբանել:
1. Համաձայն Հրավերի տեխնիկական բնութագրերի տեսակոնֆերանս համակարգը ձեռք է բերվում «ՀՀ ֆինանսների նախարարության և Մաքսային միության անդամ երկրների միջև կապն ապահովելու համար»:
2.Համաձայն Հրավերի տեխնիկական բնութագրերի անհրաժեշտ է «յուրաքանչյուր դահլիճում հնարավորություն լինի ստեղծելու անկախ վիդեոկոնֆերանս»:

Ակնհայտ է, որ ցանկացած վիդեոկոնֆերանս զանգ դեպի արտաքին*(ներքին ցանցից դուրս)*բաժանորդը կատարում է Internet ցանցի միջոցով:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:
Պարզաբանում: Այո, անհրաժեշտ է:

Հարցադրում N 42 Համապատասխանաբար, *բոլոր դահլիճներում տեղադրվող վիդեոկոնֆերանս համակարգերը կարող են իրար միջև կապ հաստատել Internet ցանցի միջոցով, ինչի համար կարելի է հանրապետությունում գործող Internet- պրովայդերներից* պարզապես վարձակալելերաշխավորված *թողունակությամբ Internet կապուղի:*

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:
Պարզաբանում: **Interanet ցանցը ավելի ապահով է քան Internet-ը:**

Հարցադրում N 43 Ինչով է այս դեպքում բնորոշված պահանջը «ապահովել բոլոր նշված

վիդեոկոնֆերանսի կետերը սերվերներին միացնող անհարժեշտ LAN ցանցով»: Տեխնիկական տեսակետից այս պահանջը լիովին ավելորդ է և կհանգեցնի միայն զգալի և ավելնորդ ֆինանսական ծախսերի:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Պահանջը բխում է վիդեոկոնֆերանսի ծրագրային լինելուց:

Հարցադրում N 44 Արդյոք Պատվիրատուն նկատի ունի որ նշված կետերի համար պիտի անցկացվի նոր ՀՀ Պատվիրատուի գործող ցանցի հետ չհամակցվածLAN ցանց:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Այո:

Հարցադրում N 45 Արդյոք Պատվիրատուի համար ընդունելի է նշված կետերի համակցումը պաշտպանված անլար կապուղիներով:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 07/09/2015թ:

Պարզաբանում: Ոչ ընդունելի չէ:

«ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/13» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողով

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ. Ջանջուղազյանին:

Հեռախոս՝ 094 49 13 38:

Էլ.փոստ՝ info@interlimens.com:

Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն: